

### ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅՈՒՄ:

Պետական Դուժայում մարտ 11-ի նիստի ժամանակ պ. Ն. Միլիլեկովը մի երկար և հետաքրքրական ատենարանութեամբ, որ լսուեցաւ խիստ լարուած ուշադրութեամբ և շատ անգամ ընդհատուեցաւ հաւանութեան ցոյցերով և ծափահարութեամբ կանգ է առնում ներկայ ուսանական կեանքի և պատերազմի շուրջը ծագած խնդիրների վերայ:

Նորա ատենարանութիւնը շոշափում է զանազան խնդիրներ, ինչպէս ա) պատերազմը և ընկերավարականները, բ) Գերման կառավարութիւնը և գերմանական ազգը, գ) Պատերազմը և Ծրանսիացի ընկերավարականները, դ) Անգղիական ժողովուրդը և պատերազմը, ե) Զրպարտութիւն Ռուս ազգի նկատմամբ, զ) Պատերազմի նշանաբանները, է) Ազատ ծով ելնելու անհրաժեշտութիւնը, ը) Գերմանիայի ծրագիրները, թ) Քաղաքագէտների գործած սխալները, ժ) Յապաղած առաջարկներ, ժա) Դաշնակիցների տարաձայնութիւնները, ժբ) Սերբիայի անգիջողականութիւնը, ժգ) Ֆերդինանդ և Բոլզարիա, ժդ) Ռուսաց յաջողութիւնները Փոքր-Ասիայում, ժե) Հայկական հարց, որի վերայ և կանգ կառնենք:

Ռուսների յաջողութիւնը Փոքր-Ասիայում:— Բարեբաղդաբար, շարունակում է Միլիլեկովը իւր ճառը, այն, ինչ որ աչքաթող էր արած մեր քաղաքագիտական մարմնի կողմից՝ այս պատերազմի մէջ մեր դիմելիք էական նպատակն,— այժմ, շնորհիւ Փոքր-Ասիայում ունեցած յաջողութեան նորից առաջ է անցնում: Բերլին-Բաղդատ գաղափարի վտանգ այժմ Բաղդատի կողմից է: Արևելքից և հիւսիսից մեր զօրքերը մօտենում են Բրիտանական զօրքերին, զօրապետ էլմերի գունդը, նեղ դրութիւնից ազատելու համար և մենք կկամենայինք արտայայտած լինել այն յոյսը, թէ անդրկովկասեան պատերազմի դաշտը բաւական նշանակալից է համարւում: (Չախակողմեաններ, «Ճիշդ է»): Թէ ինչ նշանակութիւն ունի մեր Փոքր-Ասիայի և Էրզրումի գրաւման յաջողութիւնը, ձեզ համար պարզ կլինի, եթէ ես կարգամ ձեր առաջ տաճկական տրամագրութիւններին շատ լաւատեղեակ մի անձի դիտողութիւնները. դիտողութիւններ, որ կատարուած են անցեալ տարուայ նոյեմբերի վերջերին: «Տաճիկ կառավարչական շրջաններում խօսւում է, թէ գերմանացիները քանի գնում այնքան աւելի են համոզւում, որ վերջական յաղթութիւնը բաւական մօ-

տալուտ կլինի այն ժամանակ միայն, երբ Ռուսաստանը կովկասում և Պարսկաստանում ջարդուի: Հետևեալ նկատուեմները ապացուցանում են, ըստ գերման-տաճիկ կարծիքների, կովկասը հարուածելու անհրաժեշտութիւնն ու օգուտը: Փորձը ցոյց է տուել, որ Ռուսիան չէ կարող կարևոր չափով ուժեղացնել իւր զօրքերը կովկասում: Ուստի և նա բազմիցս յետ է նահանջել Տաճիկների չափաւոր յարձակումների առաջ: Հետևաբար հնարաւորութիւն կայ աւելի ևս նեղը լծելու նորան: Դորան հարկաւոր չափով կնպաստէ և ազգաբնակութեան գլխաւոր զանգուածների տրամադրութիւնը, սակայն Ռուսաստանի հմայքն այնքան մեծ է Արևելքում, որ քանի նա կովկասում ամուր կանգնած է, հնար չկայ նորա դէմ հանել Տաճիկներին և Ռուսաստանի մէջ եղած և սահմանամերձ նահանգների մուսուլմաններին, այն ինչ առանց նոցա օժանդակութեան, Ռուսաստանին թողնելով կովկասեան ճակատը, անհնար է Տաճկաստանի ամբողջութեան խնդիրն ապահովել, եթէ նոյն իսկ Ռուսաց զօրքը Բալկաններում պարտութիւն իսկ կրէ: Ապա ուրեմն ամեն միջոց պիտի գործ դնել Ռուսներին կովկասից դուրս քշել: Թիւրքերի հաշուով 300,000-նոց մի բանակ կարող է ջարդ ու փշուր անել Ռուսներին այդ ճակատի վերայ: Կառավարութիւնը ենթադրում է, որ այդպիսի մի բանակ ստեղծել Հայկական սահմանագիծ ճակատի վերայ անհնարաւորութիւնն չէ, եթէ միայն կարևոր չափով ռազմամթերք հասցնեն այնտեղ: Գերման-տաճկական խաւերը ենթադրում են, որ հանգամանքներն այժմ շատ բարեյաջող են այդպիսի մի ճնշում գործ դնել այդ մասում»:

— Տեսնում էք ուրեմն, պ. պ., որ մուսուլմաններին ապստամբեցնելու ծրագիրն անգործադրութեան չէր մատնուած և Եգիպտոսի արշաւանքը, որի մասին այնքան աղմուկ էին բարձրացնում, գուցէ մի վարպետ խաղ էր, իսկ Տաճիկների և Գերման-տաճիկների բուն, էական նպատակն էր մեզ վերայ յաղթութիւն վաստակել այդ մասում: Դա նոյն շարժման կրկնութիւնն էր կովկասեան ճակատում, ինչ որ մի անգամ արդէն նոքա բաւական յաջողութեամբ կատարել էին, քան այժմ յաջողուեց, և խնդիրը միմիայն ժամանակի հարցն էր, մինչև որ բաւական թուով ռազմական ոյժեր և մթերք կգումարէին Էրզրումի մէջ և կամ Մոսուլում: Ահա թէ ինչպիսի վտանգի առաջն առան մեր զօրքերն իրենց յառաջխաղացութեամբ և ահա ինչպէս միանգամից ջուրը ձգեցին Տաճիկների և նոցա դեկավարող շրջանների յոյսերը՝ որոշ ազդեցութիւն ունենալ ամբողջ մուսուլմանական աշխարհի վերայ: Էրզրումի գրաւումը իւր ազդեցութիւնն ունեցաւ մուսուլման աշխարհի վերայ, սակայն բոլորովին հակառակ այն նկատուեմների, որ ունէին Թիւրքերը և, չեմ ենթադրում, պ. պ., թէ Էրզրումն ևս

Պերեմըշի վիճակը կունենայ: (Հաւանութեան գօրեղ նշաններ):—

**Հայկական ետրց:**— Գերմանական ծրագրի ջախջախուելով,— մի ծրագիր, որ ի նկատի ունէր Ռուսաստանը՝ թշնամական ոգով տարուած պետութիւնների պողպատեայ պատնէշի մէջ առնել—մենք չենք կարող առանձին ուշադրութիւն չդարձնել մի քրիստոնեայ ժողովրդի վերայ, որ ամբողջ միւսուլման ժողովրդի ծովի մէջ իբրև մի օազիս է սեպացած—կանգնած, մի քրիստոնեայ ժողովուրդ, որի դէմ է եղել միշտ ուղղուած Տաճիկ կառավարութեան քաղաքականութիւնը: Սօսքս Հայերի մասին է: Տաճկական քաղաքականութեան նպատակն, սկսած Արդիւլ-Համիդի օրերից, շատ պարզ էր այդ ժողովրդի նկատմամբ: Այդ նպատակը—կատարեալ Փիզիքական ոչնչացումն, անէացումն էր այդ ժողովրդի: Բազմաթիւ փորձերից յետոյ, որ յետս կասեցան և կանխայեցին միջազգային քաղաքագիտական միջոցներով, Տաճիկներին այնպէս էր թւում, թէ իրենց համար հասել է ամենայարմար ըոպէն: 1915 թ. ապրիլին, Էնվեր-փաշան յայտնում է Գերմանական դեսպան Վանգէնհէյմին, որ Տաճկաստանում տիրում է այն խորին համոզումը, թէ Կովկասեան ռազմարեմի վրայ կրած Տաճիկների անյաջողութիւններն, ըստ մեծի մասին, պէտք է վերագրել Հայերին, և որ եթէ վերջիններս այնքան յամառ կերպով զօրավիգ չլինէին Ռուսական գործին Կովկասում, ապա Տաճիկների դէպի Տփլիս բռնած ճանապարհը շատ աւելի դիւրացած կլինէր: Թիւրքերն այդ բանը չեն կարող ներել Հայերին. ուստի և այդպիսի կատաղութեամբ են վրէժխնդիր լինում նոցանից: Այդ յայտարարութեան իբրև հետևանք Վանգէնհէյմը 1915 թ. ապրիլին հեռագրում է Բերլին մի որոշակի ծրագիր՝ հիմնուած այդ արամադրութիւնների վերայ: Էնվեր-փաշան յայտնել է իրեն, թէ Տաճկական պետական շահերը պահանջում են Հայերի ամբողջական արտագաղթը Հայաստանից և խնդրել է, որ Գերմանիան արգելք չլինի դորան և Վանգէնհէյմն իւր կողմից միանգամայն պաշտպանում է այդ միջնորդութիւնը Բերլինի կառավարութեան առաջ: Սակայն Գերմանական տեսակէտից բոլորովին ցանկալի չէր համարւում բնաջինջ անել այդ աշխատասէր և օգտարար ժողովուրդը, որովհետև Միջագետքի աւազուտները, որ Գերմանացիք բնակեցնել էին ուզում, հէնց մի այդպիսի տարր էր պահանջում: Մարդարնակ դարձնելով Միջագետքը և երկրագործութեան նուիրելով իրեն այնտեղ՝ Հայ ժողովուրդը նոյն իսկ իւր օգուտն ունի այդտեղ, մտածում էին Գերմանացիները, որովհետև այնտեղի հողերն ամենաարգաւանդ հողերն են և շուտով նոքա տնտեսական բարգաւաճման և հարստութեան կհասնէին: Իւր օգուտն ունի նաև պետութիւնը և Բաղդատի

երկաթուղին: Ինչպէս տեսնում ենք այդ միացեալ տեսակէտները, Տաճկականը՝ Հայերին դուրս քշել իրենց բնիկ հայրենիքից, և Գերմանականը՝ գաղթեցնել նոցա մի նոր երկիր, որ իւր ապագայ գաղութների կենդրոն պիտի դառնար,—գլուխ եկաւ այնքան տխրահոշակ յաջողութեամբ անցեալ տարի Տաճկաստանում: Այժմ, էրզրումի առումով և Հայաստանի միւս քաղաքների գրաւումով, պէտք է յուսալ, որ այդ քաղաքականութիւնը իւր վախճանին հասաւ: Ռուսաց զօրքերն այժմ գտնւում են երկրի այն շրջանում, որտեղ Հայ ազգաբնակչութիւնն իւր ամենախիտ բնակչութիւնն ունէր: Ուրեմն ի՞նչ պիտի լինի հետեւեալ կատարելիք քայլը: Թւում է, որ այս մասին որ և է կասկած չիւնել չէ կարող,—դէպի Ռուսաստանն ունեցած և տաճած հաւատարմութեան համար մնասուած քրիստոնեայ ազգը պէտք է վերահաստատուի իւր բնագաւառների մէջ, և Ռուսաստանը, որ դեռ ևս թիւրքական վարչութեան ժամանակ խոստացել է այդ ժողովրդին ինքնավարութիւն, պարտաւոր է իրագործել այդ խոստումը այժմ, երբ Հայկական վիլայէթների հողերի մեծամասնութիւնն իւր ձեռքին է: Հայաստանի և հայերի ապագան մեզ համար մեծ արժէք ունին և ոչ պակաս գնահատելի քան ազգերի պայքարի մէջ մնասուած միւս բոլոր ազգերի վիճակը, որոնք բարեկամ են եղած մեզ և որ պայքարել և կռուել են մեզ հետ կողք-կողքի: (Չայնելի ձախակողմից—«բրաւո»):—

Վճանգաւոր նշաններ:—Դժբաղտարար կան մի քանի նշաններ, որ այդտեղ ևս կարող է կրկնուել տխուր յիշատակներ զարթեցնող Գալիացական շրջանը: Եւ այդ նշաններն արդէն սկսել են երևալ. դա ուրիշների կայք ու գոյքի նկատմամբ շատ թեթև վերաբերմունք ունենալու պարագան է, գոյքեր որ թողել է ազգաբնակչութիւնը և ինչ-ինչ պատճառներով այժմ պետական գոյք է համարւում... Այո, դա որոշ քաղաքականութիւն է,—ազգաբնակչութեան նկատմամբ ոչ-հաւասար վերաբերմունք: Չգիտեմ ինչու մենք հակուած ենք պաշտպանելու թափառական Քրդին և նոյն իսկ ճգնում ենք նորան երկրագործ դարձնել՝ ի հաշիւ իւր դարերով տանջած զոհի—նստաբնակ երկրագործ Հայի: Դեռ հեռու չէ այն ժամանակը, երբ Քիւրդը խլում էր Հայի հողը, փախցնում նորա կնոջը և առևանգում նորա աղջիկը, սպանում և կողոպտում նորան, իսկ այժմ այդ երեկուայ թշնամու հետ սկսել են «սիլի-բիլի» անել, ընդունել իբրև բարեկամ և նորան յայտնի նախապատուութիւն տալիս հին, դարերով փորձած բարեկամ Հայից: Յիշենք, պ. պ. Հայերի հասցէին արտասանած Դումերգի խօսքերը,—«Թող մեռածների զոհաբերութիւնը ի հաշիւ կենդանի մնացածների հաշուի»: Չսրբագործենք կազմակերպուած ալան-թալանի պտուղները և

հողերի գրաւելու ձևը, որ միայն աճել և սնուել կարող էր Տաճիկ հին վարչութեան օրերին: Դորա հետ և չմոռանանք և այս, որ հայ ազգաբնակչութեան բնիկների հողերը մի ինչ որ Նոր-Եփրատեան կողակների հողեր դարձնելու ձգտումից պիտի հեռու լինենք: Մենք չպէտք է շարունակենք Թիւրքերի գործը՝ լոկ միայն տաճիկ միւհաջիբներին ուս գաղթականներով փոխարինելով: Հրաժարուենք այստեղ գոնէ, ոտքի տակ կոխան եղած իրաւունքների և արդարութեան վերականգնման այս հանդիսաւոր ընդհան՝ նեղ ազգայնական եսականութեան ծրագիրներից: (Չախից—«բրաւօ».— Ծափահարութիւններ):

Ապա ատենախօսը երկար կանգ է առնում զանազան հարցերի վերայ, ինչպէս ա) դէպի գերիներն ունենալիք յարաբերութիւնները, բ) խաղաղութեան պայմանների մասին կանխող բանակցութիւնների վտանգաւորութիւնը, գ) խաղաղութեան անկրաւորութիւնը, և դ) ներկայ սերնդի պարտիքը:

Պետական Դումայի մարտ 14-ի նիստի ժամանակ Կովկասի պատգամաւոր պ. Մ. Պապաջանեան մի երկար ատենախօսութիւն է ունեցել Հայկական այժմեան դրութեան մասին: Նախաբանից յետոյ ճառախօսը շարունակում է,--«Մեր բարեկամ երկրների Սորհրդարանները մի քանի անգամ անդրադարձել են Տաճկաստանում և Տաճկական Հայաստանում Հայերի այժմեան վիճակի գնահատութեան խնդրին: Պետական Դուման մինչև այժմ ուշադրութեան չէր առած Տաճկական Հայաստանում կատարուող դէպքերը: Այն ինչ այդ դէպքերն ամենից աւելի Ռուսաստանի շահերն են շոշափում, որովհետև Հայերը կիսով չափ Ռուսաստանի հպատակ լինելով, բնականաբար, անտարբեր աչքով չեն կարող լինել դէպի այն անց ու դարձի պարագաները, որ սահմանի այն կողմում տեղի ունի: Կովկասի Հայ ազգաբնակչութիւնը պահանջ է զգում ձեր բարոյական աջակցութեան, որպէս զի կարողանայ օգնութեան ձեռք տալու այն անհաւասար կռուի մաքառման, որ ունեն այժմ: Այն, ինչ որ Հայաստանում է կատարուել, ոչ մի կերպ չէ կարելի նկարագրել և ամեն երևակայութիւնից անցնում է: Զնայելով Բելգիայի, Սերբիայի, Լեհաստանի անձայր տառապանքներին, սակայն և այնպէս մարդկայնութեան ժողովրդական ողբերգութեան նշանաբանը Հայաստանն է դարձած: Աշխարհիս երեսին եղած ազգութիւններից և՛ ոչ մէկն այնքան զոհեր է տուած, ինչ որ Հայութիւնն այս պատերազմի ժամանակ և իւր պատմական անցիակի ընթացքում այնքան թշուառութիւնների ենթարկուած

Հայ ազգը, այնքան չէ կորցրել, որչափ այս մի տարում: Տաճկական արկածախնդիրների հրէշային խրախճանքի զոհերը հարիւրաւոր հազարներով են հաշոււմ, որ կլանել է նա Հայութիւնից, մանաւանդ կանայք և երեխաներ: Դեռ ևս Գերմանիայի հետ մղած կռուի սկզբին, երբ Տաճկաստանը պատերազմի մէջ չէր ընկած, Տաճկահայերին որոշ առաջարկութիւններ էր լինում թէ «Միութեան Յառաջադիմութեան Յանձնախմբի» և թէ վարչական անձերի կողմից: Տաճկահայերին խոստացան ոչ միայն կեանքի անձեռնմխելութիւն, այլ և ինքնավար իշխանութիւն Տաճկական Հայաստանի սահմաններում և նոյն իսկ կովկասում, որ Գերմանիան խոստացել էր տալ Տաճկաստանին, եթէ նոքա Տաճիկների կողմը կանցնեն և կղաւաճանեն Ռուսաստանին: Այս առաջարկները, բնականաբար, մերժուեցան Հայերի կողմից, որից և սկսում է ամբողջ դժբաղդութեան սկիզբը: Այժմեան Երիտասարդ-Թիւրքերի քաղաքականութիւնն, ըստ էութեան, կարմիր սուլթան՝ Աբդուլ-Համիդի քաղաքականութեան շարունակութիւնն է, որի վերջնական նպատակն էր յանգել Հայոց հարցի վճռին՝ միմիայն Հայերին բնաջինջ անելով: Դեռ ևս Տաճկաստանի և Ռուսաստանի մէջ պատերազմ յայտարարելուց շատ առաջ՝ Հայերին ամբաստանել սկսեցին, թէ նոքա յօգուտ Ռուսաստանի լրտեսութիւն են կատարում: Հակահայ գրգռումների հետ միաժամանակ սկսեցին Հայերից զինուորներ հաւաքել ոչ 20—35 տարեկաններին, ինչպէս օրէնքն էր պահանջում, այլ 18—45 տարեկաններին: Հայ հասարակութեան լաւագոյն տարրերը և նորա մտաւոր առաջնորդները, սկսած թեմակալ եպիսկոպոսներից մինչև պետական պատգամաւորները, բանդարկուեցան և ոմանք իսկ սպանուեցան: Յետոյ սկսեցին զինաթափ անել բոլոր Հայ զինուորներին և սպանել նոցա: Պաշտօնապէս ապացուցուած է, որ մօտ 1,800 հայ զինուոր սպանուած են Տիգրանակերտի մօտ նոցա Տաճիկ զինակիցների ձեռքով: Մի քանի գիւղերում կոտորուեցան բոլոր արուները, իսկ ուրիշների մէջ չխնայուեցան նոյն իսկ ծծկեր մանուկներն ու ծերերը: 1915 թ. մայիսի 20-ին երիտասարդ-Թիւրքերի Կառավարութիւնը որոշեց վճռական միջոցներ ձեռք առնել և հրաման արձակեց դուրս բերել բոլոր Հայերին իրենց տեղերից Միջագետք, ենթադրելով, որ մի մասը ճանապարհին կը կոտորուի, իսկ միւս մասը հազիւ կարող կլինի դիմանալ Միջագետքի աւազուտներում: Սակայն դորանով էլ չբաւականացան: Առանձին հրոսակախմբեր կազմակերպուեցան, որոնք ճանապարհներին հասնում էին գաղթականների խմբերին՝ կողոպտում և սպանում էին նոցա: Այդ զարհուրելի տեսարանների մասին ձեռքի տակ ունինք օտարազգի ճանապարհորդների վկայութիւնները, ինչպէս և դիւանագիտա-

կան ներկայացուցիչների ցուցումները: Նորվեգիացի Ֆլորա Վե-տելը, որ 1914 հոկտեմբերից մինչև 1915 ապրիլ Տաճկաստան է եղած և աշխատել է Deutsche Militär Mission-ի հիւանդանոցում, վկայում և հաստատում է այն փաստը, որ իրեն ուղեկցող զինայրը (ЖАНДАРМЪ) պարծենալով էր պատմում, թէ ինչպէս իւր իսկ աչքի առաջ ոչնչացրուած են հարիւրաւոր Հայեր, որոնց ուղեկցելու պաշտօն ունէին: Խարբերդի Ամերիկայի հիւպատոսը վկայում է, որ ահագին բազմութիւն, — մօտ 3000 հոգի, — դժբաղդ տարագրուած-ներ բառացի կերպով ոչնչացրուած են այդ քաղաքը հասնելուց քիչ առաջ: Եւ ի լրումն այդ ամենի, Թիւրքերն առանձին հոգածու-թեամբ բժիշկներ էին ուղարկում, որպէս զի քննեն գեղեցիկ կա-նանց, իրենց հարեմները տանելու համար:

Անգրութիւնների պատասխանատուները:— Այժմ, մեր գրաւած տեղերում, շարունակում է ատենախօսը, դէպի ոուս զօրքն է դի-մում գունդագունդ կանանց և երեխաների խմբեր, որոնք գերուած էին տեղական Թիւրքերի և քրդերի կողմից: Եւ մեր վարիչների վերայ բացառիկ պատասխանատուութիւն է ծանրանում՝ ազատիւ այդ թշուառներին գերութեան վիճակից: Դժբաղդաբար, մինչև այժմ, այդ նկատմամբ ոչինչ չէ արուած և Թիւրքերի հարեմներն ու քրդերի տներն, ըստ առաջնոյն լիքն են Հայ կանանցով, աղ-ջիկներով և փոքրերով: Տաճիկ իշխանութիւնները սովորաբար յենուում են այն դրութեան վերայ, թէ Հայերն իրենք են յարու-ցել այդ դժբաղդութիւնները իրենց գլխին, որովհետև ապստամ-բութեան դիմեցին, որին ոյժ էր տալիս ոուսական և անգղիական քաղաքականութիւնը: Սակայն այդ մեղադրութիւնները ոչ մի դրական հիմք չունին: Սովորաբար, երբ Տաճիկ կառավարութիւնը տրամադրութիւն ունի կոտորածներ սկսել, նախ զինաթափ է ա-նում ազգաբնակչութիւնը, մանաւանդ գիւղերում: Եւ գիւղերում զգացին, որ այդ զինաթափի պարագան աղէտի սկիզբն է, ուստի և մի քանի տեղերում հրաժարուեցան զէնք յանձնելուց և դիմեցին ինքնապաշտպանութեան: Եւ այդ ինքնապաշտպանութիւնն է, որ Գերմանացիք ապստամբութիւն են անուանում և որին ոյժ է տուած նաև մեր քաղաքագիտական կազմը: Հայերի գլխին եկած ահռելի դժբաղդութեան իսկական պատասխանատուները Տաճիկ իշխանաւորներն են և նոցա Գերման բարեկամները, որ Տաճիկ-ներին ազատ իրաւունք տուին այդ միջոցներին դիմելու: «Միու-թեան և Յառաջադիմութեան» կուսակցութեան գործիչները այդ միջոցների գործադրութեան ամենաեռանդուն տարրերն էին: Էրզ-րումի մէջ, օրինակ, «Միութեան և Յառաջադիմութեան» կուսակ-ցութեան անդամներից մէկը հանել էր տուել դպրոցներից տասը հայ մատաղահաս աղջիկ՝ իւր և իւր բարեկամների կրքերին յա-

գուրդ տալու համար: Տաճիկ զինուորականների դերը ոչնչով պակաս չէ «Միութեան և Յառաջադիմութեան» մէջ գործող իրենց արժանաւոր բարեկամների դերից: Տեղի ունեցած դժբաղդութեան մեղքն ընկնում է նաև «Միութեան և Յառաջադիմութեան» կուսակցութեան Գերման բարեկամների վերայ: Վաղուց ակնյայտնի ճշմարտութիւն է, որ Պօլսի նախարարները շատ աւելի պակաս ազդեցութիւն ունեն, քան Պօլսի գերմանական դեսպանը: Սակայն և այնպէս Բարօն Վանգէյնէյմը մատը մատին չխփեց այդ ահուկի շարագործութիւնը կանգնեցնելու համար: Գերմանական մամուլը իւր դեսպանի հայեցակէտն էր պաշտպանում, յայտնելով, որ այդ ամէնը ներքին վարչական խնդիրներ են, և որ ինքն այդպիսի խնդիրների մէջ խառնուել չէ կարող. իսկ Գերման զինուորականները լաւագոյն վարմունք չունեցան, կամ իրենց տաճիկ ընկերները: Այսպէս, օրինակ: Շէնգի և Կարլ Վերտ սպաները ուժով դուրս քաշել տուին Հայոց օրիորդաց դպրոցների մեծ դասարանի սաներին և իրենց մօտ տանելով, պահեցին մինչև իրենց մեկնելու օրը, սեպտեմբեր ամիսը, իսկ մի ուրիշ սպայ մասնակից եղաւ Քեմախի կոտորածին, որի ժամանակ մի քանի հարիւր մարդ սպանուեցաւ: (Կենտրոնում և ձախից. «խայտառակութիւն . . . ամօթ»): Հայկական կոտորածների նկատմամբ Գերմանացիների բռնած դիրքը յաւիտենական նախատինքի բիծ կմնայ, ըստ երևոյթին, քաղաքակիրթ համարուող Գերմանիայի ճակատին: (Չայներ—«ճշմարիտ է»):

Իշխանութեան սխալները:—Դժբաղդարար կովկասեան Տաճկական ճակատի վերայ վերջերս տեղի ունեցած երկու նահանջը՝ պատճառ դարձաւ տեղական Հայ ազգաբնակչութեան ոչնչացման: Հակառակ արևմտեան ճակատում ընդունած կանոնների, հակառակ առողջ դատողութեան և քաղաքական հաշիւների՝ ազգաբնակչութիւնը վաղօրօք տեղեկութիւն չունէր այն մասին թէ մեր զօրքերը պիտի յետ նահանջեն: Այս բոլորի շնորհիւ այդ նահանջները Հայ ժողովրդից 40,000 հոգու զոհ տարան: Մեր նահանջի ճանապարհի վերայ վարչական մարմինը ոչ մի միջոցի չէր դիմած, որպէս զի գաղթականների փոխադրութիւնը հնար եղածին չափ քիչ թուով զոհեր տայ: Անփութութեան շնորհիւ՝ գաղթականներին այնպիսի ճանապարհներ էին ցոյց տալիս, որ ազգաբնակչութիւնը ոչնչացման պիտի առաջնորդէր, և միմիայն այդ կարգադրութեան չանսալու պարագան 40,000-նոց զոհերի քանակի վերայ մի քանի տասնեակ հազար ևս չաւելացրեց: Հայերին ոչ միայն օգնութիւն և աջակցութիւն չէր ցոյց տրուում, այլ իշխանութիւնը նոյն իսկ անհոգ անտարբերութեամբ էր վերաբերում քրիստոնեայ ազգաբնակչութեան պաշտպանութեան հարցին, որ և տեղիք տուեց

Քիւրդ ցեղապետների և Տաճկահայաստանում բնակեցրած Չերքեզներին անպատիժ շարունակել իրենց անկարգութիւններն անպաշտպան Հայերի նկատմամբ: Կամաւորների խմբերի մէկի ղեկավարը, որ անձամբ ահագին կորուստներ է ունեցել, գրում է. — «Ես և իմ 30 ընկերներս ափ ելանք, որոնց հետ ինն ամբողջ ամիս յուսահատ կռիւ էինք մղել տաճիկ կանոնաւոր զօրքի դէմ: Եւ ի՞նչ: Տեղական իշխանութեան հրամանով խլեցին մեր զէնքերը, որ մեր կեանքից աւելի թանգ արժէին մեզ համար»: (Չայներ—«Անհանդուրժելի բան»): Քիւրդ հրոսակների խմբապետները, որոնք կոտորել էին Հայերին, ոչ միայն պատժի չեն ենթարկուած, այլ նոյն իսկ Քիւրդերի գինաթափութիւնն այնպէս էր տարւում, որ Հայերի դէմ պայքարող և Հայերի գլխին ամեն դժբաղդութիւն բերած և գազանութիւններ կատարած անձերը, աներկիւղ և համարձակ շրջում էին իրենց նախկին բնակավայրերում: Դժբաղդաբար մինչև այսօր ներքին գործոց նախարարութիւնը, որի ցուցումներով պիտի առաջնորդուէին յետնամասերի իշխանաւորները, — իւր զգաստացնող միջամտութիւնը չարեց, թերևս իրենից բոլորովին անկախ պատճառներով այդ իշխանութիւնների վերաբերութեամբ: Եթէ արտաքին գործոց նախարարութեանը պատկանէր նոր գրաւած երկրների գործառնութիւնների ղեկավարութիւնն, ապա անշուշտ, տեղի չէր ունենալ այն, ինչ որ այս օրերս էր գրումի մէջ կատարուեցաւ: Այն ժամանակ կը մըռնէին, որ չէր կարելի գաղթի մատնուած, թերևս և մասամբ էլ, կոտորածի ենթարկուած, Հայերի սեփականութիւնը համարել «յարքունիս գրաւելու» սեփականութիւն, որ անցած էր Տաճիկ կառավարութեան: Եթէ արտաքին գործերի նախարարութիւնը բացատրած լինէր ում պէտք է այդ հայեցակէտի սխալականութիւնն, ապա և նա հետևեալ սխալ եզրակացութեան չէր հասնիլ, — այն է չէր արտօնիլ տեղական իշխանութեան կարգադրութիւններ անել այդ սեփականութեան վերաբերութեամբ, ինչպէս նորան հաճելի կլինէր և ինչպէս Տաճիկ պետութեան գանձարանի սեփականութիւն: Հարկաւ, Հայերի համար դա, համեմատած այն անհաւասար կորուստների հետ, որ ունեցել են, մի չնչին կորուստ է: Բայց, չէ՞ որ Ռուսաստանն էլ կարիք չունի արեան մէջ թաթախուած այդ սեփականութեան: Նմանապէս բոլորովին անարդարացի էր և այն զէնքերի և մթերքների գրաւումը, որ Հայ հասարակութիւնը ձեռք էր բերել Հայ կամաւորների խմբերի համար:

Հայերի յոյսերը: Ամէն անգամ, — վերջացնելով իւր ատենախօսութիւնը ասում է Պապաջանեանը, — երբ Տաճկաստանում որ և է ճգնաժամ էր յառաջ գալիս, ամենից շատ Հայերն էին փնասւում. և որքան թոյլ է եղած այդպիսի բոպէսներին Տաճկաստանն, այն-

քան և հարուածներն անողորմ և ուժգին են եղել: Սակայն, չնայելով տուած զոհերին և կրած տանջանքներին, Հայերը չընկճուեցան ոգով և նոր եռանդով ու ոյժերով լի շարունակում են յամառ պայքարը: 1878 թ., ձեռք ձեռքի տուած Ռուս զօրքերի հետ, Հայերը կուում էին Ռուս զօրքերի շարքերում և չնայելով այդ ծանր պատուհասին, որ հետևեց այդ քայլին, նոքա երբէք չկորցրին այն յոյսը, թէ Ռուսիոյ օժանդակութեամբ պիտի վերածնուին: Հայերը հաւատում են, որ հեռու չէ արդէն այն օրը, երբ իրենց փայփայած խոհերը կիրականան, երբ արհաւիրքներով լի կեանքի շրջանն իւր վախճանին կհասնէ, երբ հայրենի երկրի կրծքին վերակենդանութիւն կստանան Հայ ժողովրդի հնաւուրց քաղաքակրթութեան թագուն և նիրհած ոյժերը: Ռուսաստանի և նորա դաշնակիցների յաղթութիւնը կպարզուէ Տաճկական Հայաստանին ազգային կեանքի զարգացման գրաւական, իսկ Գերմանիոյ տիրապետութիւնը կսպանէ այդ փոքրիկ ազգը: Գերմանիայի ձգտումն է ոտքի տակ առնել թոյլերին, իսկ Ռուսաստանի և նորա դաշնակիցների յաղթութիւնն, ընդհակառակն, բոլոր ազգութիւնների իրաւունքների յարգելու սկզբունքը կբերէ, թողնելով որ նոքա կարգադրեն իրենց ներքին կեանքի պայմանները: (Ծափահարութիւններ բոլոր նստարաններից):

Մ ե լ ի ք .

